ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

20 մայիսի 2026 թվականի թիվ 57-Ա

ք.Երևան

«ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2026 թվականի ապրիլի 21-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 14 վարչական վարույթի նյութերը, *պարզեց*.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) վերապահված իր վերահսկողական գործառույթների շրջանակում 2026 թվականի ապրիլի 17-ին և 20-ին իրականացրել է «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերության (այսուհետ՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «ՖՈՐՏՈՒՆԱ» տեսալսողական ծրագրի 2026 թվականի ապրիլի 14-ից 16-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունների մշտադիտարկում, որի արդյունքում հայտնաբերվել են «Գովազդի մասին» օրենքի պահանջների առերևույթ խախտման հատկանիշներ:

Արդյունքում 2026 թվականի ապրիլի 21-ին կազմվել է մշտադիտարկման իրականացման և արդյունքների վերաբերյալ արձանագրություն (այսուհետ նաև՝ Արձանագրություն):

Ըստ Արձանագրության՝ 2026 թվականի ապրիլի 14-ից 16-ն ընկած ժամանակահատվածի տեսագրությունների մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է «EVA LAB» («ԷՎԱ ԼԱԲ») և «Yan Clinic» («Յան կլինիկ») ախտորոշիչ կենտրոնների գովազդների հեռարձակում, որոնցում չի նշվել գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը, մասնավորապես՝

14.04.2026թ.

«EVA LAB» ախտորոշիչ կենտրոն - ժամը 19:26:41 – 19:27:36, 20:57:25 – 20:58:19, 22:52:34 – 22:53:27.

«Yan Clinic» ախտորոշիչ կենտրոն - ժամը 13:57:38 – 13:58:49, 16:20:55 – 16:22:06, 21:21:26 – 21:22:37, 23:21:38 – 23:22:49.

15.04.2026թ.

«EVA LAB» ախտորոշիչ կենտրոն - ժամը 19:26:09 – 19:27:03, 20:58:07 – 20:59:02, 22:50:00 – 22:50:54.

«Yan Clinic» ախտորոշիչ կենտրոն - ժամը 13:57:49 – 13:59:01, 16:21:27 – 16:22:38, 21:19:31 – 21:20:43, 23:17:04 – 23:18:17.

16.04.20264թ.

«EVA LAB» ախտորոշիչ կենտրոն - ժամը 19:23:37 - 19:24:31, 20:58:32 – 20:59:26, 22:51:10 – 22:52:04.

«Yan Clinic» ախտորոշիչ կենտրոն - ժամը 13:57:42 - 13:58:52, 16:18:47 - 16:20:00, 21:20:11 - 21:21:24, 23:22:28 - 23:23:40:

Վերոնշյալը պարունակում է «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասի խախտման հատկանիշներ:

Համաձայն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի՝ Արձանագրությունը կարող է հիմք հանդիսանալ վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայել որպես ապացույց:

Հանձնաժողովը, հիմք ընդունելով 2026 թվականի ապրիլի 21-ին կազմված Արձանագրությունը և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2026 թվականի ապրիլի 21-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է թիվ 14 վարչական վարույթը:

Հանձաժողովը հարուցված վարչական վարույթի մասին 22.04.2026թ. թիվ Ե/04/04.1/290-26 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող է ներկայացնել իր պարզաբանումները և բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրության և հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2026 թվականի ապրիլի 27-ի գրությամբ (մուտքագրված 27.04.2026թ.՝ թիվ ՄԳ/582-26 գրություն) Հանձնաժողով է ներկայացրել բացատրություն, ըստ որի՝

«(...) Չվիճարկելով խախտման առկայությունը՝ միաժամանակ փաստում ենք, որ այն պայմանավորված է եղել բացառապես տեխնիկական և կազմակերպչական բնույթի բացթողմամբ և չի կրել որևէ դիտավորյալ կամ նպատակային բնույթ: Գովազդվող բժշկական հաստատությունները հանդիսանում են օրինական գործունեություն իրականացնող սուբյեկտ՝ գործող լիցենզիայով, իսկ գովազդի բովանդակությունը լիովին համապատասխանել է օրենսդրական պահանջներին և չի պարունակել որևէ ապակողմորոշող կամ անօրինական տեղեկատվություն:

Համաձայն ՀՀ «Գովազդի մասին» օրենքի՝ ընդունում ենք, որ լիցենզիայի տվյալների նշումը պարտադիր է, սակայն տվյալ պահանջի խախտումը չի կարող ինքնին դիտարկվել որպես այնպիսի իրավախախտում, որը հանգեցնում է էական իրավական հետևանքների՝ առանց վնասի, մոլորեցման կամ հանրային շահի խաթարման փաստի առկայության:

Միաժամանակ ՀՀ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի հիմունքներով՝ վարչական պատասխանատվության կիրառման անհրաժեշտ նախապայման է մեղքի առկայությունը, իսկ պատժի ընտրությունը պետք է բխի համաչափության, նպատակահարմարության և արդարության սկզբունքներից:

Տվյալ դեպքում՝

. բացակայում է դիտավորյալ մեղքը

. խախտումը կրում է բացառապես տեխնիկական և միանգամյա բնույթ/նյութի եթերային ձևաչափի համակարգչային վերաձևաչափավորման ընթացքում լուսագրային հատվածի վերջնական թվագրման տեխնիկական խոտան, ասել է, թե հոսանքազրկման պահին չի պահպանվել/, որն այնուհետև բացառապես անուշադրության հետևանքով հեռարձակվել է նշված խախտումով,

. բացակայում են, որևէ վնասակար հետևանքներ,

. չի արձանագրվել սպառողի մոլորեցում կամ իրավունքի խախտում,

. խախտումն անհապաղ վերացվել է,

. ձեռնարկվել են համակարգային կանխարգելիչ միջոցառումներ:

Գտնում ենք, որ տվյալ պարագայում խիստ վարչական պատասխանատվության կիրառումը կարող է հանգեցնել իրավական անհամաչափ միջամտության, քանի որ

. չի ապահովում իրավաչափ նպատակ (քանի որ խախտումն անմիջապես վերացված է),

. չի բխում կանխարգելիչ նպատակից (որն արդեն իսկ իրականացված է),

. կարող է դիտարկվել, որպես այսպիսի խախտման համար անհամաչափ պատժում:

ՀՀ իրավակիրառ պրակտիկայում ձևավորված մոտեցումների համաձայն՝ նմանատիպ դեպքերում, երբ արձանագրվում է նշված իրավախախտման ձևը, հետևանքներ չի առաջացրել և վերացվել է, վարչական պատասխանատվության կիրառումը պետք է սահմանափակվի նվազագույն միջամտությամբ կամ ընդհանրապես չկիրառվի:(…)»:

Միաժամանակ, խնդրել է հաշվի առնել խախտման ձևի բնույթը և մեղքի նվազ աստիճանը, գնահատել վնասի հանրային վտանգավորության աստիճանը, կիրառել համաչափ և արդար մոտեցում և հնարավորության դեպքում ազատել վարչական պատասխանատվությունից կամ սահմանափակվել խիստ նախազգուշացմամբ:

Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունը) և եզրահանգումը.

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«Հայաստանի Հանրապետության տեսալսողական մեդիայի մասին օրենսդրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, սույն օրենքը, «Զանգվածային լրատվության մասին», «Էլեկտրոնային հաղորդակցության մասին», «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին», «Լեզվի մասին», «Գովազդի մասին» օրենքները, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը, կարգավորող պետական մարմնի իրավական ակտերը, տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող այլ իրավական ակտեր և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերը:»:

Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետը սահմանում է.

«22) տեսալսողական գովազդ՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձանց, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին տեղեկությունների տարածումը Հեռարձակողի միջոցով, որը շահույթ ստանալու նպատակով կոչված է ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունը տվյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի, ապրանքների, ծառայությունների, գաղափարների կամ նախաձեռնությունների նկատմամբ.»:

Օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ մասը սահմանում է.

«Հեռարձակողների կողմից գովազդի հեռարձակումն իրականացվում է սույն օրենքի և «Գովազդի մասին» օրենքի պահանջներին համապատասխան:»:

Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովն իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:»:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 11-րդ կետերը սահմանում են.

«1) բժշկական օգնություն և սպասարկում՝ բնակչությանը խորհրդատվական, կանխարգելիչ, բուժական, պալիատիվ, դեղորայքային օգնության ցուցաբերում, ախտորոշիչ հետազոտությունների, վերականգնողական բուժման, բժշկական փորձաքննության անցկացում, հարբժշկական և ոչ բուժական բնույթի ծառայությունների մատուցում.

11) բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող՝ օրենսդրությամբ սահմանված կարգով լիցենզավորված, բժշկական օգնության և սպասարկման որոշակի տեսակ կամ տեսակներ իրականացնող անհատ ձեռնարկատեր կամ իրավաբանական անձ՝ անկախ կազմակերպական-իրավական ձևից, սեփականության ձևից, կամ պետական կամ համայնքային հիմնարկ.»:

Նույն օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Հայաստանի Հանրապետությունում բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողներն իրավունք ունեն ցուցաբերելու համապատասխան բժշկական օգնություն և սպասարկում լիցենզավորված տեսակների շրջանակներում համապատասխան լիցենզիայի առկայության դեպքում:»:

«Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասը սահմանում է.

«Բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, դեղերի մեծածախ իրացում, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում պարտադիր պետք է նշվեն կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:»:

«Գովազդի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տեսալսողական մեդիայի ոլորտում գովազդի մասին օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողություն իրականացնող՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազորված մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն է:

Հիմք ընդունելով տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրությունը , ինչպես նաև վերոգրյալ իրավական հիմնավորումները՝ Հանձնաժողովն արձանագրում է.

Հեռարձակողը գովազդ հեռարձակելիս պարտավոր էր պահպանել Օրենքով և «Գովազդի մասին» օրենքով գովազդի առանձնահատկությունները սահմանող այն դրույթները, որոնք սահմանում են գովազդի հեռարձակման որոշակի պահանջներ ու սահմանափակումներ, և այս վարույթի շրջանակներում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասի պահանջները՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների

գովազդ հեռարձակելիս պարտադիր պետք է նշեր դրանց գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:

Քննարկվող համատեքստում Հեռարձակողը 2021 թվականից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը՝ ՀՀ, Լոռու մարզ, լիցենզիայի համարը՝ ԵՀ N 304, գործողության ժամկետը՝ 21.01.2021թ.- 21.01.2028թ.), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և խմբագրական պատասխանատվություն է կրում տեսալսողական արտադրանքի բովանդակության համար:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են վարքագծի կանոններ, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, ինչպես նաև Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար, սույն պարագայում՝ Հեռարձակողը պարտավոր էր պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասի պահանջները՝ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնող կազմակերպությունների գովազդ հեռարձակելիս պարտադիր պետք է նշեր դրանց գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը

Հանձնաժողովն ուսումնասիրել է Հեռարձակողի կողմից ներկայացված հիմնավորումները, համաձայն որոնց՝ արձանագրված խախտումը կրում է բացառապես տեխնիկական և միանգամյա բնույթ, բացակայում են վնասակար հետևանքներ, խախտումն անհապաղ վերացվել է, և որ տվյալ պարագայում խիստ վարչական պատասխանատվության կիրառումը կարող է հանգեցնել իրավական անհամաչափ միջամտության:

Սակայն վերոնշյալ բացատրությունները բավարար հիմք չեն կարող հանդիսանալ Հանձնաժողովի կողմից Օրենքի դրույթներով սահմանված իրավախախտումը չարձանագրելու և Հեռարձակողի նկատմամբ վարչական պատասխանատվության միջոց չկիրառելու համար, մասնավորապես՝

1. Հեռարձակողի մեղքի և սպառողին մոլորեցնելու նպատակի բացակայության վերաբերյալ հարկ է նշել, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 9-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական իրավախախտում (զանցանք) է համարվում պետական կամ հասարարական կարգի դեմ ոտնձգվող հակաիրավական, մեղավոր (դիտավորյալ կամ անզգույշ) այնպիսի գործողությունը, որի համար օրենսդրությամբ նախատեսված է վարչական պատասխանատվություն:

Նույն օրենսգրքի 10-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե այն կատարող անձը գիտակցել է իր գործողության կամ անգործության հակաիրավական բնույթը, կանխատեսել է դրա վնասակար հետևանքները և ցանկացել դրանք, կամ գիտակցաբար թույլ է տվել այդ հետևանքների առաջացումը: Նույն օրենսգրքի 11-րդ հոդվածի համաձայն՝ վարչական իրավախախտումը համարվում է անզգուշությամբ կատարված, եթե այն կատարած անձը կանխատեսել է իր գործողության կամ անգործության վնասակար հետևանքների առաջացման հնարավորությունը, բայց թեթևամտորեն հույս է ունեցել կանխելու դրանք կամ չի կանխատեսել այդպիսի հետևանքներ առաջանալու հնարավորությունները, թեև պարտավոր էր և կարող էր կանխատեսել դրանք:

Վերոգրյալ իրավական դրույթներից հետևում է, որ վարչական իրավախախտումը ենթադրում է մեղավորություն, որը կարող է արտահայտվել ինչպես դիտավորության, այնպես էլ նաև անզգուշության ձևով: Ուստի տվյալ դեպքում դիտավորության բացակայությունը կամ սպառողին մոլորեցնելու նպատակի բացակայությունը, չի

կարող դիտարկվել որպես վարչական պատասխանատվությունից ազատող հանգամանք:

2. Հանձնաժողովն արձանագրում է, որ «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասով սահմանված պահանջը կրում է պարտադիր բնույթ, իսկ դրա չպահպանումը հանդիսանում է վարչական իրավախախտում՝ անկախ խախտման կատարման հաճախականությունից կամ քանակից: Օրենքը տվյալ իրավախախտման առկայությունը չի պայմանավորում խախտման բազմակի կամ շարունակական բնույթով, ուստի նույնիսկ մեկ անգամ նման պահանջի չպահպանումը բավարար է վարչական պատասխանատվության հիմք առաջացնելու համար:

Միաժամանակ, սույն վարույթի նյութերով հաստատվել է, որ նույն խախտմամբ գովազդային նյութերը հեռարձակվել են ոչ թե մեկ անգամ, ինչպես պնդում է Հեռարձակողը, այլ տարբեր օրերի և բազմակի՝ տարբեր ժամային հատվածներում, ինչն առավել ևս հերքում է խախտման «միանգամյա» բնույթի վերաբերյալ Հեռարձակողի պնդումը:

Հետևաբար տեխնիկական կամ կազմակերպչական խնդիրների, ինչպես նաև խախտման մեկանգամյա լինելու վերաբերյալ Հեռարձակողի ներկայացրած հիմնավորումները չեն բացառում արձանագրված իրավախախտումը:

3. Խախտման հետագա վերացումը և կանխարգելիչ միջոցառումների ձեռնարկումը չեն կարող գնահատվել որպես արդեն իսկ կատարված իրավախախտման փաստի բացառման հանգամանք, չեն հանգեցնում դրա իրավաչափության վերականգմանը, և չեն կարող հիմք հանդիսանալ վարչական պատասխանատվությունը բացառելու համար, քանի որ Հեռարձակողի յուրաքանչյուր տեսալսողական հաղորդման հեռարձակում պետք է համապատասխանի Օրենքի պահանջներին:

4. Անդրադառնալով Հեռարձակողի խնդրանքին, որ Հանձնաժողովը «*կիրառի համաչափ և արդար մոտեցում, և հնարավորության դեպքում ազատի վարչական պատասխանատվությունից կամ սահմանափակվի խիստ նախազգուշացմամբ*»՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ տվյալ դեպքում իրավախախտումը վերաբերում է Օրենքով սահմանված *պարտադիր պահանջի չպահպանմանը, որի խախտման դեպքում Օրենքը կոնկրետ սահմանում է կոնկրետ վարչական պատասխանատվության միջոց՝ տուգանք*:

Միաժամանակ համաչափության սկզբունքը ենթադրում է, որ վարչական միջամտությունը պետք է համապատասխանի իրավախախտման բնույթին, հետապնդի իրավաչափ նպատակ և անհրաժեշտ լինի այդ նպատակի իրագործման համար: Տվյալ դեպքում վարչական պատասխանատվության կիրառումը բխում է օրենքով սահմանված պարտադիր պահանջների պահպանման և տեսալսողական մեդիայի ոլորտում օրինականության ապահովման իրավաչափ նպատակներից:

Հարկ է նշել, որ Օրենքի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավոր նախազգուշացումը՝ որպես վարչական պատասխանատվության միջոց, կիրառվում է միայն այն դեպքերում, երբ կատարված իրավախախտման համար նույն Օրենքով վարչական տույժ՝ տուգանք, նախատեսված չէ:

Սույն վարույթում արձանագրված իրավախախտումը՝ «Գովազդի մասին» օրենքի դրույթի պահանջի խախտումը, համաձայն Օրենքի (28.04.2026թ. խմբագրությամբ) 57-րդ հոդվածի 25-րդ մասի՝ ենթակա է կոնկրետ վարչական պատասխանատվության միջոցի՝ տուգանքի կիրառման: Հետևաբար, քանի որ արձանագրված խախտման համար Օրենքով արդեն սահմանված է կոնկրետ տուգանք, ուստի Օրենքի 56-րդ

հոդվածի դրույթների կիրառման՝ գրավոր նախազգուշացման կիրառման իրավական հիմքերը բացակայում են:

Հանձնաժողովն արձանագրում է նաև, որ Հեռարձակողը փաստացի ընդունել է իրավախախտման փաստն առ այն, որ չեն պահպանել «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասով սահմանված դրույթների պահանջները, այն է՝ բժշկական օգնություն և սպասարկում, դեղատնային գործունեություն, դեղերի արտադրություն, բժշկական միջին մասնագիտական և բարձրագույն կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների կամ անհատ ձեռնարկատերերի գովազդման ժամանակ գովազդում պարտադիր չնշելով կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեության լիցենզիայի համարը և տրամադրման ամսաթիվը:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից՝ կրկին արձանագրում ենք՝ Հեռարձակողի կողմից թույլ է տրվել իրավախախտում, որը համապատասխանում է Օրենքի (28.04.2026թ. խմբագրությամբ) 57-րդ հոդվածի 25-րդ մասի հատկանիշներին:

Համաձայն Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի՝ կարգավորող պետական մարմինը սույն օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

2) տուգանք.

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

Օրենքի 28.04.2026թ. խմբագրությամբ 25-րդ մասի համաձայն՝ Հեռարձակողի կողմից «Գովազդի մասին» օրենքի պահանջները խախտելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:

Ելնելով վերոգրյալից և «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 11-րդ կետերից, 27-րդ հոդվածի 1-ին մասից, ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասով, 3-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով, 14-րդ հոդվածի 7-րդ մասով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետով, 42-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Գովազդի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 7^3-րդ մասով, 24-րդ հոդվածի 2-րդ մասով և հիմք ընդունելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 28.04.2026թ. խմբագրությամբ՝ 57-րդ հոդվածի 25-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել Օրենքի 28.04.2026թ. 57-րդ հոդվածի խմբագրությամբ 25-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ՖՈՐՏՈՒՆԱ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողով կամ ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ.
ՀԱԿՈԲՅԱՆ

2026թ. մայիսի 20
ք. Երևան